



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

22րդ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ  
ԳԱԻԹԵԱՆ ԿՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

ՆՈՒՔՐ

ՀՍ.Յ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒՆ

ՄԱՆԿԱԿԱՆ ՈՏԱՆԱԻՈՐՆԵՐ

Բ. ՏՊԱԿՐՈՒԹԻՒՆ  
ՃՈՒՆԵԻ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՍՐԲԱՏ ԴԱԻԹԵԱՆ

معارف نظارت جلیله سنک ۲۲۶-۵۱۳ بومرولی و فی ۱۱ کانون ثانی ۱۹۱۹  
تاریخلو رخصتنامه سیله طبع اوتیمندر



ԽՕՐԿԱՍԱՆՃԵԱՆ ԽԱՆ. ԽԻԻ 30

Uhrskāh, 4. Gulju

1904

891.995

7-23



22<sup>ր</sup> ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ 30 MAY 2011

ԴԱԻԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

891.995

ՆՈՒՆԵՐ

7-23

ՀԱՅ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒՆ

ՄԱՆԿԱԿԱՆ ՈՏԱՆԱԻՈՐՆԵՐ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՃՈՆ ԵՒ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՍՄԲԱՏ ԴԱԻԹԵԱՆ

معارف نظارت جلیه سنك ۲۲۶-۱۳۰ نومرو وفي ۱۱ كانون ثاني  
سنه ۳۱۹ تاريخي رخصتنامه سيله طبع اولمشدر



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Մ. ՍԱՐԸԵԱՆ

Պապր-Ալի հասեկի բիլ 38

1904



29 MAR 2013

8139

ԶԵԿՈՅՑ

Այս հատորիկին մէջ ամփոփեցինք մեր գրած քանի մը ոտանաւորները՝ պարզ ոճով ու լեզուով շարադրուած՝ որոնք մանուկ հասակի ըմբռնումին յարմար ըլլալով՝ հաճութեամբ պիտի կարդացունին, յուսանք: Այս ճի՛ւղը մանաւանդ կարօտ է խնամուելու, կ'արժէ որ հոգածութեան առարկայ ըլլայ ան՝ և մեր ճաշակին յարմար, և մասնաւորապէս մանուկներու հասողութեան համապատասխան ոտանաւորներով ճոխացնենք մեր դպրոցական մատենագրութիւնը:

Շատ փոքր ու համեստ այս ձեռնարկը առաջինն է, կարծենք, իր տեսակին մէջ. միայն թէ յաջողած ըլլանք լեզուի, իմաստի և արուեստի պահանջումները գոհացնել, որով և մանուկ սերունդին մտաւոր մշակութեան սատարել:

Հաւանական և ցանկալի է որ այս քանի մը ոտանաւորներու հրատարակումը գրգիռ մ'ըլլայ, և կարող Գրիչները յորդորուն մշակելու այս անտես առնուած սեռը, որ, թէև անփառունակ ու համեստ, սակայն ոչ նուազ օգտակար ու շահեկան է:

ԴԱԻԹԵԱՆ



64105-67

88742

# ՆՈՒՆԻ

ՀԱՅ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒՆ



## ՄԱՆԿԱԿԱՆ ՈՏԱՆԱԻՈՐՆԵՐ



### 1. — ԱԶՆԻԻ ՏՂԱՆ

Կար ու չի կար , հատ մը կար ,  
 Մէկ պիտիտիկ տըղայ կար .  
 Ժամ ու դպրոց երբ կ'երթար ,  
 Աղուոր , աղուոր կը կարգար .  
 Թէ՛ դպրոցը , թէ՛ տունը  
 Միշտ խելօքիկ կը կենար :

Վարժապետը կը հաւնէր ,  
 Կուտար անոր պարգեւներ :  
 Իսկ երբոր տունը դար տըղան  
 Եւ մամային ձեռք պագնէր ,  
 « Ապրի՛ս » կ'ըսէր ծեր մաման ,  
 Կուտար պատկեր ու շաքար :




Եթէ դուք ալ , նո՛յն նըման ,  
 Խելօ՛ք կենաք , չըլլա՛ք չար ,  
 Պիտի օրհնէ ձեզ Աստուած  
 Եւ պիտի տայ կեանք երկար :





### 2. — Տ Ղ Ո Յ Ա Ղ Օ Յ Ք Ը

Ո՛վ մեծ Աստուած ,  
 Որ ես տրւած  
 Մեզ բարի հայր ,  
 Անուշիկ մայր .  
 Մաքրէ՛ մեր սիրտն  
 Ու մեր հոգին ,  
 Տո՛ւր մեզ շքնորհք՝  
 Ընե՛նք աղօթք ,  
 Զըլլա՛նք անհոգ .  
 Ապրի՛նք խելօք ,  
 Պարկեշտ ու հեզ  
 Եւ սիրե՛նք քեզ :



### 3. — Ա Ռ Տ Ո Ւ

« Կուկուլիկ կո՛ւ , կուկուլիկ կո՛ւ »  
 Կ'երգէ աքլորն առտուն կանուխ ,  
 « Կուկուլիկ կո՛ւ , կուկուլիկ կո՛ւ » ,  
 Ելէ՛ք , տրղա՛ք , կանուխ կանուխ :  
 Արեւն ահա կը փալփրլայ ,  
 Զորս դին ամէն բան կ'արթննայ ,  
 Կը մայէ գառնը՝ մէ՛ մէ՛ մէ՛ ,  
 Մօտի գաշտը արծիլ կ'երթայ :  
 Ոստոսակով ճիւղէ ի ճիւղ՝  
 Ճիւլ , ճիւլ , ճիւլ , ճիւլ կ'երգէ թռուչնիկ ,  
 Կը հաւաքէ խոտ , յարդ ու շիւղ՝  
 Իր ձագերուն կաղմէ բունիկ :

×

Օ՛ն , արթընցէ՛ք , սիրո՛ւն տրղաք ,  
 Հնչեց զանգակը՝ տան , տան , տան .  
 Զեր դասերէն ետ մի՛ մընաք ,  
 Շո՛ւա ըսկըսէք աշխատութեան :



4. — Շ Ո Ւ Ն

Իմ աղճճոր շընիկ , իմ շընիկ սիրուն ,  
Կայտառ ու աշխոյժ կենդանի ես դուն .  
Գիշեր ու ցորեկ , առտու իրիկուն ,  
Կը հըսկես հօտին , կը պահես մեր տուն :

Վա՛յ , եթէ օտար կենդանի կամ մարդ  
Մօտենայ մեզի՝ չար նըրպատակով .  
Իսկոյն կը վազես՝ ի մի ակընթարթ ,  
« Հասէ՛ք » կը գոչես , հա՛վ , հա՛վ հաչելով :

Կամ եթէ աղուէան ուղէ՝ խորամանկ՝  
Գողնալու համար հաւ , բադ կամ վառեկ՝  
Անցնիլ գիշերանց մեր պարտէղին ցանկ ,  
Կը հասնիս ու զայն կ'ընես ահարե՛կ :

Իմ ազուորի՛կ շուն , իմ գեղեցի՛կ շուն ,  
Ունիս թաւ մազեր , աչքեր վառվըռուն ,  
Վընաս չես ի տար քեզ սիրողներուն ,  
Մեր հաւատարիմ պահապա՛նն ես դուն :

Պըզտիկ մանուկներ քեզ չա՛տ կը սիրեն ,  
Իրենց ձեռքովը քեզի կուտան կեր ,  
Կը շոյեն ըստեղ ու կը փայփայեն .  
Արթո՛ւն պահապան , խորտո՛րկ ընկեր :



5. — Գ Ա Ռ Ն Ո Ւ Կ Ս

Ազուոր գաւնուկ մ'ունիմ  
Կակուզ դըմակով ,  
Մաղերն են խատուտիկ  
Հեաը ճերմակով :

Ճակտին ճի՛շդ մէջ տեղը  
Կայ բիծ մը սեւուկ ,  
Չեմ դադրիր շոյելէ  
Մազերը փափուկ :

Ինձմէ չի վախնար ան՝  
Հետս է մրտերիմ ,  
Աչուկը պագնելով՝  
Վիղը կը փարիմ :

Վարժըւեցաւ՝ կ'ուտէ  
Ափիս մէջէն խոտ .  
Գիտէ ինք սիրելըս՝  
Կը մընայ իմ մօտ :

Ինք ալ իս կը սիրէ ,  
Կ'ախորժի ինձմէ .  
Երբ հեռանամ քովէն ,  
Կը մայէ մէ՛ մէ՛ :

Առտու թէ իրիկուն  
 Կը տանիմ ի պտոյտ ,  
 Որ կանաչ խոտ ուտէ  
 Կամ դալար առուոյտ :

Իսկ երբոր ծարաւնայ ,  
 Կը տանիմ առուակ ,  
 Իր դէմքը ցոլանայ  
 Զուրերուն յատակ :


Կուչա կուչա ջուր կը խըմէ  
 Սըրինգիս ձայնով  
 Յետոյ գոմ կը դառնայ  
 Պառկիլ իր մօր քով :

« Իմ գառնո՛ւկ սիրական ,  
 Իմ անո՛ւշ ընկեր ,  
 Այսօր շատ յոգնեցար՝  
 Ա՛լ քունդ է եկեր :

Գընա՛, պառկէ՛ տեղըդ՝  
 Քաշէ՛ խաղաղ քուն .  
 Ես կը հըսկեմ վըրադ՝  
 Հանգի՛ստ եղիր դուն :

Ո՛վ իմ անմե՛ղ գառնուկ ,  
 Քեզի չեմ ձըգեր ,  
 Անկեղծ սիրուդ փոխան  
 Սիրտըս տամ նըւէր » :

24 Մարտ 1896



### 6. — ՕՐՕՐ ԶԱՊԷԼԻՆ


Պառկէ՛, աղու՛ր Զապէլ , պառկէ՛ ,  
 Մայրիկդ ալ թո՛ղ օրօր երգէ .  
 Դուն քընացիր գառնուկի պէս ,  
 Վըրադ հսկենք մայրիկդ ու ես :

Թո՛ղ անուշիկ փըչեն հովեր ,  
 Ըլլայ օրրանդ տարուբեր .  
 Քաղցրիկ ձայնով ըսնք օրօր .  
 Դուն բերկրանքն ես քու հօրն ու մօր :

Փակէ՛, փակէ՛ աչքերդ անուշ ,  
 Օրրանիդ մէջ քընէ մուշ մուշ .  
 Քեզի հով տամ վարդի թերթով  
 Հազար ապրիս հօրով մօրով :

Օրօր ըսեմ որ քընանաս ,  
 Դեռ պըզտիկ ես , պխախ մեծնաս ,  
 Հիմա քընէ , ո՛վ աղաւնի ,  
 Քեզ բերող մօր բլ՛ւր երանի :





### 7. — ՀԱԻՆ ՈՒ ՎԱՌԵԿՆԵՐԸ

Նայեցէ՛ք, ա՛յ տըղաք,  
 Հաւը իր ձագեր  
 Կուտ ուտել կր տանի՛  
 Ետեն է ձրդեր :

Կըտ, կըտ, կըտ, կըտցելով՝  
 Կը քրքրին զետին,  
 Ետեւէն կը վազեն  
 Կերին մէկ կուտին :

Այսպէս կ'երթան խումբով  
 Հաւնոցէն պարտէզ,  
 Կըտ, կըտ, կըտ, կը կըտցեն  
 Աղբիւսը դէզ դէզ :

Տեսէ՛ք, ի՛նչ հաճոյքով  
 Հաւն իր ձագերուն  
 Կը հսկէ, որ չըլլայ  
 Թէ երթան հեռուն :

« Կըտ, կըտ, կըտ, հո՛ս եկէք »,  
 Կանչէ մայրերնին,  
 Անոնք կուտ զըտնելով՝  
 Նետեն փորերնին :

Այսպէս՝ մինչ իրիկուն՝  
 Ձագուկներ զըւարթ  
 Կը շըրջին՝ քրքրելով  
 Աղբիւսը կամ յարդ :

Մէկ մ'ալ ձայն կը լըսուի՛  
 Երբ գայ իրիկուն,  
 « Ծիւ, ճիւ, ճիւ, վա՛ռեկներ,  
 Եկէ՛ք դէպի տուն » :

Վառեկներն՝ հաւին հետ՝  
 Ա՛լ յողնած դաղրած՝  
 Տուն կը դառնան հանգչիլ  
 Հաւնոցը թառած :



### 8. — ՈՂՁ ԸԼԼԱՅ ՀԱՅՐԻԿԸ

Աղնիւ եղբա՛յր իմ Կայէն,  
 Երբ հայրըս գայ շուկայէն,  
 Կը բերէ մեզ ամէն օր,  
 Խաղող, ծիրան, տանձ, խնձոր :

Ամէն անգամ որ ան գեղ  
 Երթայ, բերէ հաւկիթ, եղ  
 Մենք ալ օրը երկու հեղ  
 Կ'եփենք, կ'ուտենք ձըւազեղ :


Իսկ երբ երթայ մեղուարուն ,  
 Անուշ մեղրը բերէ տուն .  
 Քեզի համար մէկ բըջիջ  
 Բաւ չէ , եղբայր Մըկրտիչ :

Հայրիկն երբ դայ ջաղայքէն ,  
 Բաժին բերէ բաղարջէն ,  
 Մենք այդ հացէն քաղցրահամ  
 Կ'ուտենք օրը չորս անգամ :

Երբ որ երթայ ագարակ ,  
 Բերէ պանիր , սեր , կարագ ,  
 Մածուն թարմ և չօթ բարակ՝  
 Կ'ապշոպենք արագ արագ :

Հայրիկն երթայ երբ պարտեզ .  
 Քաղէ առատ բերէ մեզ՝  
 Սալոր , ձմերուկ ու շամամ ,  
 Որ ուտելով առնենք համ :

Ողջ մընայ թող մեր հայրիկ  
 Որ կը բերէ շատ բարիք .  
 Օրհնեա՛լ ըլլայ Ս. Աստուած  
 Որ մեզ հայրիկ է տըւած :



### 9. — ԵՐԿՈՒ ՅՈՉՈՒՆՆԵՐ

( Զմեռուան պահեր )

Զրմեռ օր մըն էր .  
 Սաստիկ կը ձիւնէր .  
 Բոլոր դաշտ ու լեռ  
 Անտառն ու սարեր  
 Ճերմակ էր պատեր՝  
 Գետն իսկ էր սառեր :

Երկու թռչուններ  
 Զունէին կուտ , կեր .  
 Եւ յուսահատած՝  
 Իջեր էին ցած ,  
 Մինչեւ գեղջուկին  
 Խըրճիթն աղքատին :

Թըք , Թըք , թըք զարկին  
 Լուսանց ապակին ,  
 Որուն ներսի դին  
 Խըռըւած այր , կին՝  
 Շուրջը կըրակին՝  
 Նստեր տաքնային :

Կամաց մը բացին  
 Դուռը լուսանցին ,  
 Եւ երկու թռչներ՝  
 Իրարու ընկեր՝  
 Տըկար , դողդոջուն՝  
 Մըտան դէպի տուն :

Ամբողջ մէկ ձրմեռ ,  
 Մեր փոքրիկ ձագեր  
 Այդ տան մէջ կեցան ,  
 Պատըսպարուեցան ,  
 Կերան յաղեցան  
 Մինչ ի դուռ դարնան :

Տունին տըղաքներ  
 Կուտային միշտ կեր  
 Իրենց հիւրերուն՝  
 Գորովով անձուն :  
 Ձագերն ալ անվախ  
 Խայտային ուրախ :

Երբ եկաւ դարուն ,  
 Եղանակ սիրուն ,  
 Մեր երկու թռչնիկ՝  
 Գոհ և երջանիկ՝  
 Հեռացան իսկոյն  
 Դէպի իրենց բոյն :



### 10. — ԱՇԽԱՏԵՑԷ՛Ք

Ո՛րչափ ուժ ունիք ,  
 Ո՛րչափ որ կրնաք ,  
 Պէտք է աշխատիք՝  
 Պարագ չի մնաք :


Ժիր մշակն անա  
 Արտը կը հերկէ ,  
 Եւ առատ ցորեն  
 Կը ստանայ անկէ :

Դարբինն իր մուրճը  
 Կը զարնէ սալին .  
 Կայծ ցայտէ շուրջը  
 Մետաղք կը հալին :

Ջուլնակն իր կրկոց  
 Մէկ մ'աջ , մէկ մը ձախ  
 Կուտայ ու կ'աւանդուրս  
 Երգելով ուրախ :



69105-67



Հիւանդ իր ուրազ ,  
 Կարուակն իր հաստ թակ  
 Կը զարնեն թիւք թաք  
 Գործեն շարունակ :

Դո՛ւք ալ , մանո՛ւկներ ,  
 Աւէ՛ք օրինակ ,  
 Միշտ աշխատեցէ՛ք  
 Սրտով գո՛հունակ :

Որչափ ո՛ւժ ունիք ,  
 Ո՛րչափ որ կըրնաք ,  
 Պէտք է աշխատիք  
 Պարապ չի մընաք :



## II. — ՄԵՐ ՏՆԱԿԸ

Մեր տունը մեծ շէնք մը չէ ,  
 Չունի՛ ոսկի ձեղուններ ,  
 Սակայն պալա՛տ մը կ'արժէ՛  
 Մե՛նք ենք անոր միակ տէր :

×

Հո՛ն ծընած են մեր պապեր ,  
 Ու հո՛ն ապրած գո՛հ սըրտով ,  
 Անուշ կեանք մը , անկեղծ սէր  
 Հո՛ն կը վայլենք ապահով :

×

Մեր բունիկն է մեր տընակ՝  
 Թէպէտ անշուք ու պըզտիկ՝  
 Կը սիրենք զայն շարունակ  
 Ու հոն կ'ապրինք երջանիկ :



### 12. — ԱՐԵՒԱԳԱԼ

Առտու եղաւ . երկնի դռներ կը բացուին ,  
 Ոսկի շողեր ցանէ արեւն իր չորս դին ,  
 Կը փարատի մութ գիշերը , արշալոյս  
 Կը զարգարէ՛ իր շողերով՝ ծաղիկ , բոյս :



Տեսէ՛ք . սարին վերէն կը ծագի պայծառ ,  
 Ամպին տակէն դուրս կը ցայտէ մեծափառ .  
 Ոսկի՛ արեւ , ելի՛ր , շողա՛ լուսալիր ,  
 Առանց քեզի , ծագիկ ու ցօղ չեն փայլիր :



Առանց քեզի մարդը ապրիլ կարօ՞ղ է .  
 Առանց քեզի կը բուսնի՞ տունիկը հողէ .  
 Առանց քեզի , թռչուն կրնա՞յ գեղգեղել՝  
 Արարչին սուրբ անունն օրհնել յեղյեղել :




Անհունութեան մէջ ասպարէզդ արձա՛կ է  
 Հոն քըրքմագոյն ճաճանչներդ արձակէ՛ .  
 Կեանք տուր խոտին , ծաղկին , փոքրիկ միջատին ,  
 Տաքցո՛ւր շողովդ մարմինը հէգ աղքատին :




### 13. — ՎԱՐԺԱՊԵՏ ԵՒ ԱՇԱԿԵՐՏ

« Ա՛լ զըզուեցայ , ա՛լ ձանձրացայ  
 Սա դպրոցէն , վարժապետէն .  
 Սեւ սեւ պատեր , սևւ տախտակներ  
 Սիրտս ու հոգիս մութով պատեն :  
 Ի՞նչ է աս , պե՛ . ամէն առտու  
 Կանուխ ելիր , դպրոց վազէ .  
 Մի՛շտ դաս սերտէ , վարժապետին՝  
 Ըրէ՛ ինչ որ կամքը կ'ուզէ :  
 Մի՛շտ նոյն սեղը դամուած նըստած՝  
 Առջիդ տետրակ , ձեռքդ դըրիչ՝  
 Գըրէ՛ , կարդա՛ հաշիւ ու թիւ .  
 Գետինն անցնին տախտակ , կաւիճ : »  
 — Իսկ վարժապետն՝ ի պատասխան՝  
 Ըսաւ անոր . « Աս կեանք է որ  
 Ես կը վարեմ : Խեղ , անպիտան  
 Տըղաքներու հետ՝ ամեն օր՝  
 Ապրիլ , և միշտ այս աթուէն  
 Կըրկնել անոնց՝ միշտ նոյն դասեր :  
 Եւ տըքնութեանըս փոխարէն  
 Գոնէ վայլե՛մ յարգանք ու սէր . . . :  
 Ո՛հ , չէ՛ , անոնք՝ միշտ անուղղայ՝  
 Միշտ անհոգ են , ծոյլ ու տըգէտ :  
 Ո՛րն երկուքէս , դժգո՛հ տըղայ ,  
 Այստեղ արդեօք ձանձրոյթ կ'զգայ : »



14. — ԳԻՇԵՐ

Իրիկուն է , արեւն իջաւ ,  
 Սարին ետեւ , պատեց խաւար ,  
 Մարդ ու տըղայ , ոչխար ու հաւ  
 կուտան իրենց գործին դադար :  
 Մըչակն իր արտ հիմա թողած՝  
 Դաւնայ իր տուն՝ մանգաղն ուսին .  
 Ուրախ սրտով նըստի սեղան՝  
 Ձաւկըներուն հետ միասին :  
 Տաքուկ ապուր ու հաց համեղ  
 կը ճաշակեն ակտրժանօք ,  
 Եւ փառք կուտան ձայնով անմեղ  
 կերակրողին կ'ընեն աղօթք :  
 Արդ կը հընչէ ժամն հանգստի  
 Եւ ամենքը կ'երթան ի քուն  
 Որ նո՛ր կորով շնորհէ պիտի  
 Իրենց խոնջած մարմիններուն :  
 Ոչխարները՝ փարախին մէջ՝  
 կը վայելեն խաղաղիկ քուն  
 Ա՛լ չի լսուիր ծառին վրայ  
 Ճիւ ճիւ ձայնը թռչուններուն :  
 Եւ երկինքի բարձունքներէն  
 Անթիւ կանթեղ՝ բոյլ բոյլ կախած՝  
 Արարածներ մինչ լուռ նիրհեն՝  
 Անոնց վրայ հսկէ Աստուած :



15. — ԿՈՎ ԿՅԵԼ

( Նամեղարար )

« Եկո՛ւ , եկո՛ւ , սիրո՛ւն կովիկ ,  
 Պատրաստեր եմ քեզի կովկիթ .  
 կըկուզ նըստիմ ես քու քովիկ՝  
 Չորս ծիծերուդ քաշեմ պըտիկ :

Դուն հանդարտիկ կայնէ՛ առջիս ,  
 Ծիծերդ առնեմ մէջը ափիս ,  
 Տամ քեզ լակըդ , կուշտ կուշտ խմէ՛  
 Պըտուկներէդ կաթը հանէ :

Առջիդ դընեմ կիրըդ բուռ բուռ ,  
 Լեցուն պուտեր ափիս մէջ տո՛ւր .  
 Վեր մի՛ քաշեր կաթըդ համեղ  
 Իեզ պատրաստեմ պառկելու տեղ :

Քու հորթի՛դ ալ ես կուտամ կեր ,  
Ան չի՛ մեռնիր , մի՛ մի՛ վախեր .  
Հանդա՛րտ կեցիր , թո՛ղ տուր կթեմ ,  
Թէ՛ ո՛չ ամանըս կը վաթեմ : »

×

Կովիկն հանդարտ կայնած լըռիկ՝  
Բացաւ ծիծին լեցուն պըտիկ ,  
Մարդը կըթեց ամուր ամուր՝  
Ճերմակ կաթը հանեց փըրփուր :

Անուշ կաթով մինչեւ բերան  
Լեցաւ խոշոր կաթին աման .  
Խեղճ հորթուկին բան չը մընաց  
Ա՛ն ալ տըրտում մէկգլխի գընաց :



### 16. — ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐԵՐԳ


Բա՛րեւ , ընկե՛ր , մենք ալ ահա  
չըրջինք զուգապար ,  
Ուրախութեան ժա՛մ է , հըրճուի՛նք ,  
պարե՛նք անդադար :

Զըլլա՛յ տըխրինք մենք՝ սըրտով՝  
Այլ ըզբօսնո՛ւնք անխըռով :  
Հաճոյքն և ըզբօսանքն  
Ընկեր ունենանք :

Խնդա՛նք , խնդա՛նք , հա՛ , հա՛ , հա՛ , հա՛ ,  
Շըրջապարնիս կ'ընենք ահա .  
Զեռք ձեռքի մէջ՝ ապա՝  
Զոյգը տեղն երթայ :


Հիմա , զոյգ զոյգ առա՛ջ նետուինք ,  
Խոնարհութեամբ ետ ետ քաշուինք .  
Ապա , թո՛ղ տանք ձեռքերնիս ,  
Անցնինք տեղերնիս :

Երգի պարի ժա՛մ է , տըղա՛ք ,  
Պիտի հընչէ հիմա զանգակ .  
Խաղը կուտայ մեզ աշխոյժ  
Աշխատելու ոյժ :



17. — ԵՐԿՐԱԳՈՐԾԻՆ ՔՐՏԻՆՔԸ

1. Գարնան անձի օրէն  
Դաշտ կ'երթայ անի ,  
Յողմիլն ինչ է՝ չի՛յտէ՛ ,  
Անխոնջ կը բանի :  
Թէ՛ ցուրտ ըլլայ , թէ՛ տաք ,  
Անձրև կամ չոր օդ՝  
Ան՝ իր արտին մէջ է՝  
Աշխոյժ ու փութկոտ :
2. Արօրը եղերուն  
Լըծած կը վարէ ,  
Դէպ առաջ դէպի ետ  
Տանի ու բերէ :  
Տակն ի վըրայ կ'ընէ  
Հողը ծարէ ծար ,  
Բրտինքով կը թըրջէ  
Արտին հողն ու քար :
3. Արեւին ջերմութեամբ ,  
Տողով անձրևին  
Ատաք հունձքերն ահա  
Շողան ծածանին :  
Դաշտ ու լեռ կը փայլին  
Առած ոսկի գոյն՝  
Ինչ հաճոյք է զիտել  
Հասկերը հասուն :
4. Թէպէտ չողն արեւուն  
Կապարի նրման  
Օրն ի բուն՝ ամառը՝  
Կ'իշխէ իր վըրան ,



- Բայց ա՛ն մի՛շտ կ'աշխատի  
Ձի ժամ է հունձքի ,  
Ժամ է վարձքն առնելու  
Առատ քրտինքի :
5. Անոր դէմքը հովէն ,  
Արեւէն այրած՝  
Թեւերը վեր սոթած  
Լայնկէկ կուրծքը բաց՝  
Կը յողմի , կը տքնի  
Կապիլ խուրձ որայ  
Որոնք դէպ դէպ կ'ընէ  
Իրարու վըրայ :
6. Կալին մէջ կը ծեծէ  
Հասկը դեղնագոյն ,  
Թէ՛ ցորեն ե թէ՛ յարդ  
Կը տանի իր տուն .  
Կը լեցուին ամբարներ ,  
Մինչեւ ի բերան  
Վարձքը կ'առնէ մշակն  
Իր աշխատութեան :
7. Թափէ՛ , մըշակ , թափէ՛  
Քու ճիգն ու քրտինք ,  
Քու շնորհիւ ամէնքս  
Հաց կ'ուտենք , կ'ապրինք .  
Հազար երնեկ քեզի  
Որ վարես գո՛հ կեանք ,  
Աշխարհի օգտակա՛ր  
Է՛ քու աշխատանք :

18. — ՍԱՐԵԱԿ

Սեւո՛ւկ սարեկիկ ,  
Եկո՛ւր մեզ մօտիկ ,  
Գեղգեղէ՛ դարունն  
Աս մեր դաշտերուն :

Քու պէսպէս գեղգեղ  
Սար ձոր՝ ամէն տեղ՝  
Թող լըսուի զըւարթ ,  
Հըրճուի ամէն մարդ :

Ծառեր , դալարիք ,  
Եւ գոյն գոյն ծաղիկ  
Թող, աճին շուտով  
Գարնան ջինջ ցօղով :

Անտառ , այգեստան ,  
Պարտէզ , լուրաստան  
Թո՛ղ ակնապարար  
Փայլ տան լիւր հազար :

Ծաղիկ ծիրանին ,  
Սալորն ու գեղձին  
Բուրմունքով անոյշ  
Տան մարդուն կեանք , յոյս :

×

Սարեկը եկաւ  
Ու մեզի բերաւ  
Պայծառ արեգակ  
Ու ջերմ եղանակ :

Հալեցան ձիւներ ,  
Բացուեցան դաշտեր ,  
Եւ մարդիկ համայն  
Գործի սկըսան :

Դաշտ ու ծառաստան  
Ծաղկիլ սկըսան ,  
Անուշ բուրմունքով  
Սըրտեր լեցուեցան :

Սրտով գոհունակ  
Աստուծոյ փառք տանք  
Որ մեզ՝ դարունի  
Ընէ արժանի :

Թո՛ղ պայծառ արեւ  
Ու կանանչ տերեւ  
Մեզ երջանկութեան  
Քաղցրիկ յոյս տան :



19. — ՄԱՆՈՒԿԻՆ ԱՂՕԹՔԸ

Ո՛վ հայր , կը պաշտէ ըզքեզ իմ հայրիկ ,  
Ու կ'երկըրպագէ ի ծունրը իջած .  
Անունդ է անեզ , անունդ է քաղցրիկ ,  
Քեզի կ'աղօթէ մայրըս դեանամած :

Կ'ըսեն թէ երկնի սոյժառ արեգակ  
Խաղալիկ մ'է լոկ քու մեծ զօրութեան ,  
Թէ՛ ան շողուն դունար սոքերուդ տակ  
Կը շարժի կարմիր կանթեղի նրման :

Կ'ըսեն թէ կեանքը դո՛ւն կուտաս թըռչնոց  
Որ դաշտերուն մէջ թրոյն ու երգեն .  
Դո՛ւն կուտաս հոգի պիտիտիկ սղոց  
Որ ըզքեզ ճանչնան , քեզի աղօթեն :

Առատ պարգևներ ու բարիքդ անձուն  
Միշտ կը լեցընեն աշխարհ համօրէն ,  
Մարդ ու կենդանի , միջատ ու սողուն  
Չեն մընար անմասն քու շընորհներէն :

Գառնուկն իր խոտը կ'երթայ ճարակի ,  
Այծն ալ ծըղօտ մը կըրծէ մացառէն ,  
Ճանճը բաժակէն ծըծէ շիթ կաթի ,  
Եւ ամենքն ուղղեն օրհնութիւն առ էն :

Ի՛նչ պէտք է ընենք որ շընորհներուդ  
Ըլլանք արժանի՝ աւտու իրիկուն ,  
Երբ ցորեկ է լոյս , կամ գիշեր է մութ՝  
Ի՛նչ ընելու ենք . — Յիշել Բու անուն :

(Թարգմանաբար)



20. — ԾՂՐԻԴ ՈՒ ԹԻԹԵՈՒՆԻԿ

( Առակ )

ԾՂրիդ մը խեղճ , փոքր ու նրկուն ,  
Խոտերուն մէջ նըստած՝ տըխուր՝  
Թիթեռնիկ մը տեսաւ փայլուն  
Որ դաշտին մէջ՝ զուարթ կ'ոստնուր :

Շող կ'արձակէր , կը փալիւլար՝  
Կարմիր , կապոյտ գոյնով պայծառ .  
Ծաղկափրթիթ , յոյժ գեղեցիկ , սըպրկիկ՝  
Կը թռչըտէր , կ'անցնէր ծաղկէ ի ծաղիկ :

ԾՂրիդն հառչեց սըրտին խորէն ,  
Եւ սկըսաւ սապէս խօսիլ ինքնիրեն .  
« Ո՛րչափ անգութ է Մայր-Բնութիւն

Որ անոր տըւաւ  
Շընորհներ անբաւ .  
Եւ զիս՝ չար բաղդէս՝  
Խեղճ թողուց այսպէս :

Չո՛ւնիմ հանճար , դեղեցկութիւն .  
Թըշուտա կ'ապրիմ՝ զուրկ շընորհէ՛  
Ամէն մարդ ալ զիս կ'անարդէ .

Կեանքս է տըխուր  
Ապրիլս է զո՛ւր :  
Ի՛նչ բաղդ անգութ  
Անշուք է մութ : »

Մինչդեռ այսպէս կը տրտնջար ,  
Հոն կը հասնի տղոց մի պար ,  
Որ կը սկըսի՝ խելացընոր՝

Վըրան վազել թիթեռնիկին .  
Նախանձելով ամէնքն անոր՝  
Կ'ուզեն բռնել : Անոնցմէ մին  
Կը նեաէ թաշկինակ ,  
Եւ միւսը՝ իր գլխարկ :

Ողորմելի միջատն ի գո՛ւր , վայրապա՛ր ,  
Անոնց ձեռքէն ազատելու կը ջանար .  
Մին կը բռնէ թեւէն , մէկալը՝ գլխէն ,  
Երրորդն եկաւ քաշեց մէջքէն :

Հոն կիսամեռ  
Ինկաւ թիթեռ  
Ու մեր ծղրիդն՝ անշուք , անտէր՝  
Որ սրտաբեկ զայն կը դիտէր ,  
Խղճալով բազդին  
Աղուոր թիթեռին  
Ըսաւ , « Ըլլայ խրատ ինձի ,  
Չփափաքիլ փայլ ու փառքի » :

— Թէ երջանիկ ազրիլ կ'ուզես ,  
Համեստ , անշուք ապրելու ես : »

(Թարգմ.)



## 21. — ԳԵՐՄԻՆԷՆ

Ոսկի մազեր Գերմանիկիս  
Խոպոպ կազմեր գլխուն վերե ,  
Ծաւի աչուին անուշ ցովքով  
Իբրեւ մէյմէկ փայլին արե :

Ժըպիտ մ'անուշ՝ բերնին վըրայ ,  
Երբ իս տեսնէ , կը փթթի միշտ .  
Հօրը վըրայ կը գուրգուրայ ,  
Կը փարատէ հոգերն ու վիշտ :

Կարծես հրեշտակ մ'է երկինքէն  
Իր հօրն ու մօր պարգև սըրուած ,  
Հրեշտակ , այո՛ , Գերմանիկէն ,  
Արեւն անոր պահէ Աստուած :





22. — ԿԵՅՅԷ՛ ԳԱՐՈՒՆ

Բարի՛ եկար , աղնի՛ւ գարուն ,  
 Բարի՛ եկար , հազար բարով .  
 Շատ կը սիրենք տեսքդ սիրուն ,  
 Քեզ կը տօնենք երգով պարով :


Թոչուն , ծաղիկ , ձոր ու անտառ՝  
 Օ՛ն , միացէ՛ք մեր երգերուն ,  
 Երգե՛նք , գոչե՛նք մենք անդադար  
 « — Կեցցէ՛ գարուն , ազու՛ժ գարուն » :



23. — ԺԱՄԻՆ ՄԷՋ

Ժամին մէջ կայ խաչ ու խորան ,  
 Ջահ ու բուրվառ , աւետարան ,  
 Շուրջառ , փիլոն , սաղաւարտներ ,  
 Խորանին վրայ սուրբի պատկեր :

Կը հաւաքուին հօն շատ մարդիկ  
 Աղօթք կ'ընեն մեծ ու պղտիկ ,  
 Յետոյ կուտան մաս ու նշխար  
 Բոլոր մարդոց համահաւասար :



24. — Ի՞ՆՉ Է ՇՐԵՇՏԱԿԸ

Պօղոս՝ գոց ըրած արդէն իր համար՝  
 Աւագին վրայ նստեր կը խաղար :  
 Քոյն էր մեծ մայրը՝ ձեռքին մէջ Սաղմոս ,  
 Ակնոցն ալ աչքը՝ կը կարդար անխօս :

Յանկարծ՝ պատանին վաղեց անոր քով  
 Ու վիզը ցատքեց : Հանին զարմանքով՝  
 «Անառա՛կ, թո՛ղ տուր օձիքս, ալ հերի՛ք :  
 — Շատ լաւ, բայց խնդրեմ, ըսէ՛ մեծ մայրիկ :

Հրեշտակ որ կ'ըսեն , ի՞նչ տեսակ բան մ'է՛ ,  
 Մե՛ծ է , պզտիկ է՝ կ'աղաչեմ պատմէ՛ : »  
 Հանին՝ սիրալիր նայուածքով մ'անհուն՝  
 Ըսաւ . « Հրեշտակը դո՛ւն ես ահա , դո՛ւն : »



25. — ԲԱՅ Օ՛Դ Մ՛ԸԼԼԱՐ

«Ա՛խ , ո՛ւր էր որ բաց օդ մ'ըլլար ,  
 Կ'ըսէր թիթեռ մը թեթեւ ,  
 Ասանկ սմբած չէի մընար .

Թափ կուտայի , կ'առնէի թեւ՝  
 Դաշտերուն մէջ ծաղկով լեցուն  
 Ման կուգայի ես ցնծուն :

— Ե՛ս ալ , կ'ըսէր , մեղու մը ժիր ,  
 Բաց օդ կ'ուզեմ որ՝ ե՛ս ալ  
 Գործիս նայիմ ամէն ի ժիր :

Ուրիշներէն բան չյուսալ ,  
 Ապաւինիլ ջանքիս մինակ՝  
 Ըսկզբունքս է, թիթե՛ռնակ :

Թարգմ.



26. — ԿԱՂԱՆԴՉԷՔ

(Պոսիկ տղ մը՝ իր մեծիկն)

Սա չորս տողերով ձեզ կուտամ բարե ,  
 Աստուած շքնորէ՛ ձեզի շատ արե .  
 Ամէն մարդ կուտայ , կ'առնէ կաղանդէք՝  
 Հարկաւ դուք ալ զիս մըտքէ հանած չէք :



27. — ԴՊՐՈՑ

Ի՞նչ աղուոր է դպրոց երթալ՝  
 Խաղալ , երգել , գրբել կարդալ :  
 Դեռ պըզտիկ եմ , բայց շարունակ  
 Դաս սորվելու ունիմ փափաք :

Բան չեմ գիտեր այսօր՝ իրա՛ւ՝  
 Բայց վարժուհիս ա՛յնպէս մ'ըրաւ ,  
 Դասըս այնպէ՛ս մը հասկըցուց  
 Որ կ'ըմբռնեմ զայն հիմակուց :

Ա՛ն ալ նրման է մայրիկիս ,  
 Կը խրատէ , կը կըրթէ զիս .  
 Կուզեմ մօր պէս սիրել զինքն ալ ,  
 Տուած դասերը չը մոռնալ :



28. — Տ Ղ Ո Ւ Մ Ը

Հեռու, հեռու մեղքին ճամբէն՝  
 Ուրկէ չարերը կը քալեն,  
 Դուն Աստուծոյ ճամբան բռնէ,  
 Մա՛նկիկ, սրտիդ խինդը պահէ  
 Ու Աստուծոյ ճամբան քալէ :

Համե՛ստ եզիր : Բեզի լո՛նչ փոյթ  
 Հարուստին պերճ կեանքը անքոյթ  
 Շունչ մը դանի կը հալածէ :  
 Ու ժեղն ան է որ կը տածէ  
 Սիրտ մ'որ լաւին միշտ փարած է :

Տիրոջ աչքէն են միշտ հեռու  
 Ճոխ դըղեակներն հարուստներու  
 Բայց կը հսկէ նոյն աչքը միշտ  
 Բունիկն յարգով, չիւզով չինուած՝  
 Ուր կը լըսուի երգ մ'առ Աստուած :




29. — ՊԱՀԱՊԱՆ ՀՐԵՇՏԱԿԻՍ

Ո՛վ պահապան իմ հրեշտակ,  
 Որ կը հըսկես դլխուս վերե,  
 Իս պահպաննէ քու թեւիդ տակ  
 Եւ չընորնէ ինձ օր լ'արեւ :

Խաղաղ քունքս չխանդարի՛,  
 Քաղցր երազներ տեսնեմ միայն  
 Մայրիկս անուշ, հայրըս բարի  
 Շա՛տ օրերով ապրած մընան :

Թող կազդուրուի միտքըս յոգնած  
 Եւ ըստանայ ոյժ ու կորով,  
 Կանուխ ելլեմ ես առտըանց  
 Սորվիմ համարս արթուն մըտքով :

Քունը հանդիստ կուտայ մարդուն,  
 Կ'ընէ առողջ, զըւարթ, արի :  
 Ո՛վ իմ հրեշտակ, հըսկէ՛ արթուն,  
 Քեզ կը մաղթեմ «գիշեր բարի» :



30. — Ա Ռ Ո Ւ Ա Կ Ը

Դուզըլ, դուզըլ սահելով՝  
 Առուակը հեղիկ,  
 Դալարաւէտ ավն ի վար  
 Մըղէ իր ալիք :  
 Ծաղկին, խոտին համբոյրներ  
 Կուտայ շտապով .  
 Անուշ գեղգեղ կը լըսուի  
 Իր ամերուն քով :

ԳՐԼԳՐԸ , ԳՐԼԳՐԸ կը սուրայ ,  
 Զուրը պաղպաջուն  
 Եզերքներուն խոտին վրայ  
 Տղաքը կ'ըբօանուն :  
 Խիտ ոստերն են ծառերուն  
 Անոնց հովանի ,  
 Եւ ձայնակից երգերուն՝  
 Զովաչունչ քամի :  
 Զունին անոնք ո՛չ նախանձ  
 Ո՛չ հոգը կեանքին  
 Վայրկեանները ոսկեզօծ  
 Զըւարթ կը սահին :  
 Զինչ վըտակին ալիքներ  
 Անոնց կեանքին հետ ,  
 Արագ , արագ կը փախչին  
 Ու չեն դառնար ետ :  
 Զըւարթ ու խօ՛ւ քըրքիջներ  
 Տըղոց են բաժին ,  
 Եւ մըրմունջներ հեղասահ՝  
 Երգն են առուակին :  
 Մի՛ն կը վազէ դէպ ի ծով  
 Անե՛զը , անսահման  
 Օր մ՛ալ 'տի գայ որ դադրին  
 Երգերը մանկան :



31 — Ո՞Վ Է ԱՍՏՈՒԱԾ

Երկիրն ինձի հարցուց՝  
 «Ո՞վ է՝ ո՞վ Աստուած :  
 — Ա՛ն՝ որուն բարիքով  
 Աշխարհ է լեցուած .  
 Ա՛ն՝ որ միակ քայլով  
 կը չափէ անհունն  
 Եւ որմէ Արեւն ալ  
 Կ'առնէ իր չողիւն :



Ա՛ն է որ ըստեղծեց  
 Երկիրն ու երկինք ,  
 Ա՛ն է որուն մէնք միշտ  
 Փառք տալ կը պարտինք  
 Ա՛ն որ չունի բընաւ  
 Ո՛չ ծիր , ո՛չ սահման .  
 Որ տիեզերքին մէջ  
 Կարգեց ամէն բան :



Մէկ ակնարկովն անի  
 Ցուացուց Լոյսը ,  
 Մարդ էակին շնորհեց  
 Ըստփող Յոյսը ,  
 Ու Սէրն ալ հաստատեց  
 Մարդուս սրբաին մէջ  
 Ինք որ անհուն սիրոյ  
 Հընոցն է անչէջ :



Ինք՝ աղբիւր բարութեան  
 Արեգակն արդար՝  
 Օրհնե՛նք իր սուրբ անունն  
 Գովենք անդադար :



32. — Ը Ն Կ Ո Յ Ձ Ը

Կոկիկ , կոկիկ , կլորիկ  
 Ունիմ՝ ընկոյզ աղուորիկ ,  
 Վրան ունի կանաչ փուր (\*),  
 Տակի կճեփն է ամուր :  
 Կանաչ փուրը վար կուտամ ,  
 Որ մէջինէն ստանեմ համ :  
 Գեղին մաշկ մ'ալ կայ ըարակ  
 Ներսը ընկոյզ ըսպիտակ .  
 Կեղուէ՛ , կըճփէ՛ կամացուկ  
 Որ ճաշակես իր միջուկ :

×

Ընկուզենին է մեծ ծառ՝  
 Տեսքը չըքեղ մեծափառ ,  
 Լի են ճիւղերն ընկուզով  
 Որոնց մէջէն փչէ հով .  
 Երբ տաք կ'ընէ արեւը ,  
 Երթանք նստի՛նք ներքեւը ,  
 Քարեր նուտենք դէպ ի վեր ,  
 Գետին թափենք ընկոյզներ .  
 Ժողվենք , փըրենք , տանինք տուն՝  
 Բաժին հանենք ամենուն :

(\*) Փուր = ընկուզին կեղեր : Փրէլ = փուրը վար քալ :

33. — Տ Ի Պ Ա Ր Ք Ա Շ Ա Ն Ա Ն

Հագած սև ըղգեստ , գըլուխը փակեղ ,  
 Կը չըրջի տէրտէրն ամէն տուն ու տեղ .  
 Սըրբութեան ողջոյն ցանէ ամէն դի ,  
 Իր բերնէն , կարծես , մեզր կը կաթի :  
 Ծնորճալի ու հեղ այդ տէրտէրն Հայ է .  
 Որ իր օրհնէնքը քեզի կ'ընծայէ :

Երբ ժամկոչ աղբարն՝ լոյս առաւօտուն՝  
 Կը հնչեցընէ կոչնակը ժամուն ,  
 Տէրտէրն հոն դիմէ քայլերով արագ՝  
 Կարդալ , աղօթել , ընել պատարագ :  
 Սուրբ , առաքինի այդ տէրտէրն Հայ է .  
 Որ մաս ու նշխարք մեզի կ'ընծայէ :

Նորածին մանուկն երբոր Ժամ տանին ,  
 Կը մըկըրտէ զայն մշջն աւազանին .  
 Ծշմարիտ հաւատք , յոյս ու անկեղծ սէր ,  
 Կը ներշնչէ անոր մեր ծերուկ տէրտէր .  
 Թաւ ձայնով կ'երգէ «Մկրտի՛ Գրիստո՛ս» .  
 Իր բերնէն ըղխի աղօթք մշտահոս :

Երբոր հարմնիք կայ՝ շուրջտուր ուսին՝  
 Նարօտ կը կապէ հարսին ու փեսին .  
 Ծընորհաւորանք , տաղեր , չարական՝  
 Զըւարթ շեշտերով կ'ըսէ տէր պապան .  
 «Օրհնեալ եզկցի , որդեա՛կ , այս պըտակ»  
 Որ առատ նուէրով լեցուց իմ քըսակը :

Դարձեալ , երբ կուգայ օրը մեր վերջին ,  
 Ու երկինք կանչէ մեզ ձայնը Փրկչին ,  
 Հայ տէրտէրն է որ մինչև գերեզման  
 Կուգայ կատարել կարգը սուրբ թաղման :  
 Մահերգակ գանձով ու խաչով , այնտեղ  
 Կը գոցէ փոսը , կ'օրհնէ վերջին հեղ :

Ո՛ւր որ տեսնես զինք, փութա՛, իր աջն ա՛ռ  
 Ո՛ւր որ ներկայ է, կեցի՛ր հոն պատկառ :  
 Մեր միջնորդն է ան՝ Աստուծոյ առջին ,  
 Սուրբ պաշտօնեան է կրօնի ու խաչին :  
 Հեղուկ ու բարի Հայ քահանային՝  
 Աչքերն առ Աստուած յաւէտ կը հային :

Իր ժողովուրդին հովիւն անձուէր  
 Աստուած է կոչեր , Աստուած պարգեւեր .  
 Հօտը տէրտէրին ու տէրտէրն հօտին  
 Միշտ և հանապազ միմեանց կարօտին :  
 Տէրտէ՛ր, փարատէ՛ մեր հոգւոյն վիշտեր  
 Մեզի սորվեցո՛ւր Աստուծոյ պատուէր :

Վ Ե Ր Զ



ԴԱԻԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ա. — Ընթերցանութեան Դասընթաց

( Տողերուն սկիզբի թիւերը ցոյց կուտան Դասքեան հրատարակութեանց շարքը )

		ԶըՂ.
1. — Ա. Վարժութիւն Մանկանց	Ժ. տիպ. Գին 3 1/2.	
2. — Բ. » »	2. » » 5	
3. — Գ. » »	2. » » 5	
11. — Ընտելւորան հոյ լեզուի	Գ. » » 5	
15. — Այբբենարան (պատկերազարդ)	Գ. » »	
44. — Մայրենի լեզու Ա. տարի	» » 2 1/2.	
47. — » »	» » 4	
38. — Հանդիսարան Բարոյագիտութեան	» » 6	

Բ. — Արտասանութեան Դասընթաց

6. — Փունջ Հաւարածոյ	Ե. տիպ. Գին 3
7. — Փնջակ (100ը 60 զըՂ.)	Ե. » » 1
8. — Երկրորդ Փունջ , Հաւարածոյ	Բ.—Գ. » » 7
18. — Երկրորդ Հաւարածոյ	Բ. » » 4
22. — Նուէր Հայ Մանուկներուն	Բ. » » 1 1/2.

Գ. — Քերականութեան Դասընթաց

4. — Տարրական Քերականութիւն	Ե. տիպ. Գին 2
5. — Լրացուցիչ Դասընթացը	Գ. » » 3

Դ. — Շարադրութեան Դասընթաց

9. — Գործնական Ընթ. Շարադրութեան	Գ. տիպ. Գին 3
12. — Սկզբունք Համաձայնութ. և Շարադրաս. Ա.-Բ. »	» » 3

Ե. — Բարոյագիտութեան Դասընթաց

23. — Դաստիարակութիւն աղջիկներու ,	Գին 3
25. — » պատանիներու ,	» 3
38. — Հանդիսարան Բարոյագիտութեան .	» 6

### Զ. — Կրօնագիտութեան Դասընթաց

		Ղրշ.
14.	— Տարրական Ընթացք Կրօնի Ուսման Գ. տիպ.	Գին 2
20.	— Համառօտ Կրօնագիտութիւն Բ. »	» 3
29.	— Տղոց Կրօնագիտութիւն	» 4
37.	— Ծաղկաբաղ Քրիստ. Վարդապետութեան	» 4

### Է. — Աւխարհագրութեան Դասընթաց

27.	— Աշխարհագրութիւն Օսմ. Կայսրութեան	Գին 3
-----	------------------------------------	-------

### Ը. — Գիտական Դասընթաց

24.	— Գիտութիւններու վրայ ժողովրդական դասեր, Հըսլիի	3
41.	— Իրագիտութիւն Համառօտ	3

### Թ. — Թուաբանութեան Դասընթաց

30.	— Թուաբանութիւն Մեղրական դրութեան	5
-----	-----------------------------------	---

### Ժ. — Նախակրթութեան ամբողջ Դասընթաց

34.	— ՆՈՐ ԴՊՐՈՅ, (10 պրակ) որ կը բովանդակէ Բարոյագիտութիւն, Քաղաքագիտական Կրթութիւն, Պատմութիւն, Աշխարհագրութիւն, Թուաբանութիւն, Երկրաչափութիւն, Գիտութիւններ եւ Հայ լեզուի Բերականոնութիւնը :	30
-----	--	----

### ԺԱ. Դասընթաց Ֆրանսերէնի

13.	— Nouvelle Méthode, I. (Alphabet) Բ. տիպ.	Գին 2
42.	— » » II. (Méthode Directe).	» 4

### Չանագան Գիրքեր

10.	— Բանակի շարտարութեան	Գին 7
40.	— Ուղեցոյց Գ. Վարժուցեան	» 5
36.	— Լիակատար գրացուցակ	» 5
45.	— Գեղանին Ֆրանսին, Իրավեպ, Օր. Մէրի Ազատեան	» 5
46.	— Ծրագիր Ազգ. Նախակրթութեան	» 5



### ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ԵՒ ՏՊԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Ս. Դաւթեանի Կրթական - Հրատարակչական Գործակալութիւնը կ'ստանձնէ հրատարակել ուրիշ հեղինակներու պատրաստած գիրքերը, մանաւանդ զասագիրքերը՝ Մէարիֆէն վաւերացման, տպագրութեան, փորձերու սրբագրութեան, կազմի և այլ աշխատութիւնները կատարելով :

Ի զիւրութիւն անոնց որ մտադիր են ո՛ր և է գիրքի հրատարակութիւնն ընել, ստորեւ ցոյց կուտանք ինչ ինչ միջոցներ ու պայմաններ որոնց գործադրութիւնն անհրաժեշտ է .

1. Տպուկիք գիրքին ձեռագիրը եՐԵՒ ՕՐԻՆԱԿ գրուելով մեզի զրկուելու է . (վաւերացման համար Մէարիֆին ներկայացուած ձեռագիրներն ըստ օրինի երեք օրինակ ըլլալու են) :

2. Ձեռագիրը տեսնելէ վերջը միայն կրնանք որոշել՝

Թէ գիրքը ի՞նչ գիրքով ու ծաւալով և քանի՞ ֆօռմա կրնայ ըլլալ :

Թէ ո՛րչափ գումարի կրնայ հասնիլ անոր տպագրութեան, թուղթին, կազմին, սրբագրութեան և յարակից աշխատութեանց ծախքը :

Թէ ո՛րքան օրինակ պէտք է և կրնայ տպուել :  
Թէ Դաւթեան Գործակալութիւնը կը ստանձնէ՞ հոգալ գիրքին ծախքը և իր հաշուին կատարել տպագրութիւնը :

Թէ այս պարագային ի՞նչ իրաւունք կը վերապահէ գիրքին տիրոջը կամ հեղինակին :

Այս ամէն կէտերը կարելի չէ որոշել մինչեւ որ աչքի առջեւ չունենանք տպուկիք գիրքը :

Ձեռագիրը չդրկւած՝ այս պայմաններու մասին նամակով մեզի հարցումներ ուղղել աւելորդ ժամավաճառութիւն ու յոգնութիւն պիտի ըլլար, որոնց պէտք չթողնելու համար է որ այս տեղեկութիւնները կը յանձնենք մեծարգոյ հեղինակներուն ուշադրութեան, որպէս զի գիտակցարար համակերպին վերոյիշեալ առաջին պայմանին, և երեք օրինակ ձեռագիրները ապահովագրուած ղրկեն մեր հասցէին :

3. Ի՞նչ անոնք որ կ'ուզեն իրենց հաշուին կատարել զիրքին հրատարակութիւնը, պէտք է հոգան ծախքերը, ճշդին թէ ի՞նչ քանակութեամբ ու կազմով կ'ուզեն հրատարակել իրենց գիրքը : Այս պարագային ալ, ծախքին քանակութիւնը որոշելու համար, դարձեալ անհրաժեշտ է որ տեսնենք ձեռագիրը և ըստ այնմ ցոյց տանք մօտաւոր հաշիւը :

Նոյնպէս, կը կատարուին տպագրական ամէն գործեր՝ այցետոմս, շրջարեւական, նամակազըլուխ՝ ազգեր, դպրոցական բարեհիշ, պատուանիշ, վկայագիր, վիճակացոյց, եւ այլն » :

**ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՆԱՄԱԿՆԵՐ**

Մեզի հետ գործի վերաբերեալ թղթակցութիւն ընող անձեր է կը խնդրենք խնայել մեր ժամանակին. ասոր համար կ'առաջարկենք :

1. Նամակները գրել ընթեռնի գրով, յստակ ոճով և կարճ, շատ կարճ, միայն կարեւոր կէտերը, առանց աւելորդ բանութեան :

2. Նիւթերը զատել թիւերով :

Ասով կարելի է զգուշանալ շփոթութիւններէ, յապաղումէ և ժամանակի կորուստէ :

Իրո՞ծակարութեան վերաբերեալ նամակ, դրամ ևլն. ղրկելու է առ Սմբատ Դաւթեան,



استامبولده سرکچيده خوراسانچيان خاننده داوديان سميپا افندي  
Mr SIMBAT DAVIDIAN, Horassandjian han, Sirkédji



# ԴԱԻՔԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿ

8139

1. Ա. Վարժուքիւն Մանկանց		
2. Բ. " " "	Յրդ	4
3. Գ. " " "	Յրդ	5
4. Տարւական Վերականգնութիւն	Յրդ	2
5. Լեացուցիչ Գաղթբացի	Յրդ	3
6. Փռնիչ, աշխարհ. Հաւաճածոյ	Յրդ	3
7. Փնջակ, պսակեագարդ	Յրդ	1, 25
8. Սեղանդ Փռնիչ (յար սիւլ)	Յրդ	6
9. Գործն. Ընթացի Շարագրութեան	Յրդ	3
10. Յանգլի Շարագրութեան	Յրդ	2
11. Ընտելարան Հայ լեզուի	Յրդ	2
12. Սկզբունք Համաձայնութ. և Շարագրութեան	Յրդ	3
13. Nouvelle Méthode. I. Տիկին Սոփիկի	Յրդ	2
14. Տար. Ընթացի Գրոհի, Վ. Փնջ. Ազգանանի	Յրդ	2
15. Պատկերագար Այրբնարան [յար սնով]	Յրդ	20
16. Յայտագիր Գաղթեան Գործակալութեան	Յրդ	2
17. Մաղկախաղ Հաւաճածոյ, միջին օրջան	Յրդ	4
18. Գարցազարութիւն, գործ E. E. Whiteի		5
19. Աւածապատմ		5
20. Համառօտ Գրոհագիտութիւն	Յրդ	3
21. Սոցիալ ծայր		5
22. Նուէր Հայ մանուկներուն, (պատկերագարդ)	Յրդ	1, 20
23. Գասխարակութիւն Աղջիկներու		3
24. Հնգի, գիտութիւններու վրայ դասեր		3
25. Գասխարակութիւն Պատանիներու		3
26. ԲԻԻԲԼԿԵ լրագիր, սպգագրակաւ, սարեզին		100
27. Աշխարհագրութիւն Օսմ. Ասյարութեան		3
28. Վերքուածներ		5
29. Տղայ Գրոհագիտութիւն		5
30. Թուարանութիւն մեղրական դրութեան		5
31. Առաջնորդ Անգղ. լեզուի		5
32. Իզմանկիւն, Լ. Նիկոլիս		5
33. Օսմ. Տ. զապագութիւն		5
34. ՆՈՐ ԳՊԻՆՅ, 10 պրակը (փոստայի ծախսով)		25
35. Շրջաբերական ,, Նոր Գարց" ի		5
36. Լիակատար Գրացուցակ		
37. Մաղկախաղ Ֆելս. Վարդապետութեան		4
38. Հանդիսանում Յարցագիտութեան, Ս. Գաղթեան		6
39. Սոցիալագիր, թ. թերթեան և Տոլիս		5
40. Առեկոյց Գ. Վարժուքեան, դ. սասաններու համար		5
41. Երագիտութիւն Համառօտ (մտաւարդական սնով)		3
42. Nouvelle Méthode. II. par Mme. Satnik		4
43. Յայտագրութիւն Ս. Պատարագի, Գրոհ. Բառ.		5
44. Մոյշեհի Լեզու, Ս. Տարի		2, 20
45. Գեղանիկ Յրանսին, Օր. Մէրի Ազատեան		5
46. Մրագիր Ազգ. Կախակրութեան		5
47. Ս. Մայր. Լեզու Գաղթեան		2
48. Հաւակ Նոր Գրականութեան		2
49. Նոր Ընթացի Յրանսին		2, 20
50. Առեկոյց Լուսանկարչութեան, Յակոբ Յ. Թերթեան		3
51. Բնական Մանկալիս, Յովհ. Վարդապետի Նաղապետեան		2
52. Նոր Այլապի Աստիարան		4
Հարցի՝ ԱՊՐԱՅՑ ԳՈՒՆԹՈՒՆ, Խորասանահան խան. Սիրիծի.		